

ՏԵՐ ԵՒ ՏԵՐՈՐԷՆ

Ե . ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի ԳԱՂԻՐԷ (Նախախառնի)

Թիւ .


E. TOROSSIAN

Direc.- propr. du journal arménien

AROHALOWICE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահիւն .	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ »	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՆԻԿ ԵՒ ԹՊՄԱՍՈՐԻ ԺԱԽՔԸ ԽՆՔԱԳՐՈՒՔԱՆԱՆ ՎՐԱՅ Է :

ԽՆՔԱԳՐՈՒՔԱՆԱՆ ՈՂՊՈՒՄԸ ԶՐՈՒՔԻՆԻՖ ԵՍ ԸՆԵ ՏՐՈՒԻՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ ԿԱՆԻՔԻ ԿՏԱՐԵՅԻ ԵՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱՆՈՅՍԻ

Բ - ՏԱՐԻՈՅ

Առշաղյուսի Տնօրինութիւնը միեւնոյն հաստատամտութեամբ պիտի շարունակէ իր ԵՐԿԻՐՈՒԹ ԾԱՐԻՆ . և այդ՝ իրաւունք կուտայ իրեն այսօրու ընդէ բանալ Երկրորդ սարուոյ բաժանորդագրութիւնը :

Առշաղյուսի , թէեւ անցեալ տարուոյ Օգոստոսի սկիզբէն հրատարակուիլ սկսելով՝ ճիշտ այս թուով պիտի սկսէր իր երկրորդ տարին , սակայն իւր ընթացքին մէջ ՓՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ կազմութեան պատճառաւ , մէկ ամսոյ չափ ընդհատուած ունենալով՝ այդ պակասը պիտի լրացնէ , իր բաժանորդաց զրկանք մը չ'լինելու համար :

Առշաղյուսի ծաւալին ընդարձակման և այլ բարեփոխութեանց համար պիտի ըստպանէր ժամանակ մը , մինչեւ որ այդ փոփոխութիւնները ընել կարենալու . համար ապացուած պէտքերը մեզ հասնին :

Գահիրէի համար Առշաղյուսի տարեկան բաժանորդագրինը զեղջելու փոխարէն՝ նոյնը պիտի պահենք և այդ փոքրիկ տարբերութիւնը պիտի հատուցանենք ամեն բաժանորդի ձեռքը զրկելով թիֆեմէն օրինակ մը , որ մամուլի տակ է՝ և 200 ի մօտ էջերէ պիտի բազմանայ :

Առշաղյուսի Տնօրինութիւնը այս առթիւ կը խնդրէ իր արտասահմանի բաժանորդներէն , որպէսզի հաճին իրենց անվճար բաժանորդագրիներն փութով հասցընել :

ԼԻՆԻՆԻ ԹԵ ԶԸ ԼԻՆԻՆԻ

(ԳԱՂԻՐԷԻ ՀԱՅ ՏԻԿԵԱՆՅ)

Խորագիրս սոսկում թող չի պատճառէ ձեզ . կ'ազատեմ , չ'ըլլայ որ զարհուրանքի ու երկիւղի բուռն յորձանքին մէջ խղճուիք՝ զէթ զիս վայրկեան մը մտիկ ընելէ առաջ :

Սակայն ինչո՞ւ այս վարանումը . . . ինչո՞ւ ձեր գալիկահար դէմքերուն վրայ ցուցող ահաւոր ժպիտը մարեցաւ . . . ո՞ւր մնացին ձեր այն վարդի շրթները , որ պահ մը առաջ երբ մեզուն տեսնէր՝ չի պիտի վարանէր երբէք անկէ հեւթ ծծելու . հա-

պա այն հրափայլ աչքերը , որոնց մէջ խռովիչ բաներ կը նշմարուին . և որք կը խոստովանին միանգամայն ձեր յանցանքը , ճիշտ այն չարագործներուն նման՝ որք անյայտ կ'առաջնորդուին դէպի կառափնաբեմ :

Կարծեմ ձեր միապաղաղ հանգարտութիւնը խռովեցաւ և հիմա անբուժելի տրամաբեան մը պիտի վարակուած կ'երևիք . . . ներում . հազար , բիւր անգամ ներում . . . բոլոր այս ինթադրութիւններս իմ ծուռ դատողութեանս արդիւնքը ըլլալը դեռ սա վայրկեանիս կ'ըմբռնեմ . մոռցայ , մոռցայ թէ՛ մարդկային ազգի փրկիչը՝ Գրիստոս ալ կերպարանափոխ եղաւ , որ անցեալ օր տօնեցինք :

Արդեօք անձնախարութեամբ ճիգեր կը թափեմ սրտիկս և հոգիս թարգմանելու համար :

Տեսնե՛նք . օ՛ն ուրեմն . վայրկեան մը ևս համբերեցէք , որպէսզի միասին լուծենք սա հանելուկը :

Լինի՛ւ թէ չի լինիլ :

Շէյքսպիրի Համլէթի միայն ներշնչեց սոյն խորհրդաւոր ու միանգամայն արհաւիրակից նախադասութիւնը , որ կարծես սոյն վերջինը , հոգեվարք հիւժարտաւորի մը վերջին հեծկտանքովը , յիմարի թափով մը իւր ափին մէջ գտնուած գանկին , Շէյքսպիրեան փայլակներով նայուածք մը ուղղելէ յետոյ , անդուլ անդադար՝ այդ փոռած սակրին կը պուար ու կը պուար . լինի՛ւ թէ չի լինիլ . և ուրիշ կ'սկսէր իր մենախօսութիւնը :

Շէյքսպիրի մէկ խօսքը ինձ նախաբան ընելով՝ չ'ըլլայ կասկածիք թէ՛ անոր երկերուն և հրաշակերտներուն վրայ պիտի խօսիմ :

Համլէթ մը չի պիտի ներկայացնեմ ձեզ և ոչ ալ գանկին պատմութիւնը . ոչ Լիր Արքայի վատութեան վրայ պիտի խօսիմ , ոչ Օթէլլօյի նախանձտուութեան վրայ պիտի ճառեմ և ոչ ալ՝ Բին դերասանին հեզնուած սիրոյն վրայ :

Ո՛չ . ո՛չ . Համլէթի արտասանած « Լինի՛ւ թէ չ'լինիլ » ը իր իսկական իմաստովը ո՛ր և է կապ չունի մեր այսօրուան լինելու չ'լինելու խնդրոյն հետ . հեռեւարար այդ խորհրդային ժրագիրն իմաստը իր անգին արժեքովը մէկդի թողլով՝ վերագառնանք մեր բուն նպատակին թէ ի՞նչ ըսել կ'ուզենք :

Մեր ամենուս ծանօթ է թէ՛ Հայաստանի մէջ կատարուած կոտորածները ,

իրենց արհաւիրակից պատուհանները սարքելէ յետոյ , սոյն մեր ապրած քաղաքակիրթ աշխարհին մի քանի տասնեակ հազար որբեր ընծայեցին . որոնք այսօր աշխարհիս չորս կողմը ցրուած , զանազան ապաստանարաններու դրան սեմէն օգնութիւն և կարեկցութիւն կը մտնան :

Ապագայ Հայութեան մի կարեւոր մասը կազմող այդ նոր սերունդը , որուն ճակտին վրայ թշուառութեան դատակնիքը դրոշմուած է , պատառ մը հայով իր անօթութիւնը փարատելու և մի քիչ ուսում և կամ պարզ արհեստ մը սովորելու համար , հազարու մէկ տառապանքներով ու չարչարանքներով , հոս հոն կը գեղեցիկ ու կը գեղեցիկն :

Քաղաքակիրթ Եւրոպան՝ էր անդուլ աշխատութեամբ և անվճար յարատեւութեամբ ժամանակէ մը ի վեր ցանած սև ու անիծեալ սերմին ծլարձակումը երբ տեսաւ , որոշ ժամանակուան մը համար զգաստացաւ , յուզուեցաւ . և վերջի վերջոյ սկսաւ գթալ այդ կիսամեռ ընտանեզուրկներուն :

Աւելորդ կը համարիմ այս մասին լայն ու ճոխ տեսութիւններ ընելու . քանի որ արդէն շատ մը գործներու կողմէ Հայ որբիկներու մասին շատ ու շատ գրուեցաւ . այնքան որ ցաւալի է ըսել թէ՛ այդ գրութիւնները շատերուն զգուանք ազգած , և միանգամայն ձանձրոյթ պատճառելով միշտ սա յանկերգը մըմնջած են « Այսպար նորէ՞ն որբերուն վրայ գրեր են » :

Ինչպէս գիտենք , արտասահմանեան գրեթէ բոլոր երկիրներուն մէջ , Որբախնամ Ընկերութիւններ կազմուած են , որոնք նիւթական բաւական կարեւոր ուժեր գոյացնելով՝ Ազգ . Պատրիարքարանի միջոցաւ կը փութացնեն Հայաստանի որբանոցներուն :

Գահիրէի Հայութիւնն ալ՝ Հայաստանի որբերուն իր բարերար ազգեցութիւնը նուիրելու համար ի՞նչ ըրաւ . ելաւ չորս Որբախնամ Ընկերութիւններ կազմեց . ճիշտ չորս աւետարանիչներուն պէս , որոնք ամենքն ալ Գրիստոսի Աստուածութեանը վրայ կը ճառեն :

Եւ որովհետեւ Գահիրէի Հայութիւնը , եթէ ոչ մեծաւնանութիւնը՝ գէթ մէկ մասը , ժամանակէ մը ի վեր նորանոր գիւտեր հնարելու միակ նպատակաւ Եանքիներու հետ մրցման բռնուած է , ուրեմն այս գործին մէջ ալ նորութիւն մը ներմուծելու համար , երկու Որբախնամները միացած և հապշտապ Առաջնորդարանի սանդուխներէն վեր փութալով ինքիւնք մը , և ել-

միաձինն ալ Հայրապետական Կոնգրակ մը ձեռք ձգեցին, բայց թողլով միւս Որբա- ինամներն. որովհետեւ անձնական գծով հաշիւը ու փառասիրական ձգտումը այս գործին մէջ ալ թագաւորած էր . . . :
(Ճարտնականի) Գ.

ՍԻՐԱՅԻՆ ԽՈՂՆԵՐ

Սիրելիք իմ Ալիս

« Սերը չ'մեռնիր »

Օրերու ամենէն նուիրականն էր ինձի հա- մար այն օրը, եւ ամենէն միտնաբերականը կըր ալ երանութիւնը իր մեղրակաթի երեւումովը բերած էր մեզի համար մեր սիրած քաղցրը, ան- մահն ու անբացատրելին :

Ինչք, զգայութեան այդ անպատմելին՝ Աստուծոյ Սրբութեան հովանի գէպի անմահու- թիւն հոտոզ որպէս մի սրբափայլ առուակ, իր կուսական կարկաղովը կը ցուցնէր մեզի հեռու- նը. մեծ ծովը, ուր պտտող մշուշային եթերին վրայ անհունի քնարին հետ սառաւնած էր անասնոցի մեծ ողին ու շունչը :

Եւ այդ ծովը բնութեան իմարու յաջողող երեւոյթներուն մեծ կեանքը՝ որուն գործաւոր եզերքը նազել թէ ոտք դրած, առաձգական ու ժով մը գրաւած էր արդէն իմ սիրտս ու հոգիս : Իր ծակերէն պատած երբեմն խաղաղ երբեմն խռովայող տրեքները իրենց շափոթոցներովը յաճախ կը սաստէին զիս, երբ ես անհունի ան- ջրպետը կտրելու անյոյս երկիւղովը շուարած կը մտածէի : Հապա իր խաղաղ մակերեսն, ան զինքը զգուշ մղկան անցօր թեւերուն պէս երբեուն, եւ հոգիի գոհունակ զուարթութեանը պէս զուարթ կ'ըստպէր իրեն հրամայող բնու- թեանը կամքին : Հովին, երկնքին, որոտումնե- րուն եւ ուր ուրեմն արեւմտի վերջնիկեր բողբո- ին, ուր զեղեցիկ բոլոր պատճառներովը զար- դարուն կը պատրաստէր ցնալից՝ ընդունելու լուսաշողով իր մեծ հիւրը որ կուգար բարձրէն պաղատանք ապաստանի իր փառաւոր շուքին սակ :

Ան ալ ծովուն կառաջնորդուէի ես որ- պէս մի նորընծայ կեանքի, Ալիս, կառուցա- նելու իմ սիրական հիւղակս, որուն տէրը պի- տի լինէր ոչ կամքին սիրածը ոչ գիպուածին ներկայացուցածը. այլ Ան, Ան բնագոյնն եւ սրտին պարզեւածը :

Ալիս, անկէց յետոյ սկսան փոփոխութիւն- ները բնութեանս, ժամանակիս՝ եւ նոյն իսկ գիշերներուս մէջ, վայելքի դռները պաճ մը կար- ծեցի թէ բացուած են, որուն արեւածաղովը կը ներշնչուէի գիտաբերել իմէ նոյն իսկ բաղդին հալածանքները իրենց բոլոր ուժերովը վրայ հաս- նելին :

Հետզհետէ նոր իրձ մը, նոր համակրու- թիւն մը կը ծագէր սրտիս մէջ՝ դէպի այն կող- մը՝ ուր կը կենար ու կայրէր ան. եւ այն ա- ռարկաները՝ որոց մօտէն կամ ջովէն պիտի անց- նէր ինքը, ինձի այնպէս կը թուէր թէ իւրա- քանչիւրը իւր աւետիսն ու ըսելիքը ունի. ու շատ անգամ՝ ու դեռ մինչեւ ցարդ, կը փոր- ձուիմ միամտօրէն հարցնել. թէ անձն մը արդ- եօք զինքը եւ ինչպէս, զուարթ թէ անուր կամ ո՞րպիսի արամադրութիւններով :

Միակ դանձս կը համարէի զինքը ու չ'էր ըլլար երկվայրկեան մը, որոյ սիրոյն շնորհք- ները չ'զային զեղեցիկահիւս ապագայի մը ամ- բողջ խորհուրդները տալու ինձի : Շնորհք մը կը սեպէի իր զեղեցիկ սիրած մարդու ու պարզ որ պիտի դար միանալու ուրիշով մը. դարձեալ վաքուր ու պարզ :

Ցնածալից էին օրերուս շատ քիչ ժամերը. իսկ տաղալից աւելի գիշերներս : Երեւակա- յութեան հրեշտակն էր ինքը. արշալոյսիս ա- նուշ երգը եւ առաստուս լուսածածանչ արեւա- կը : Օրուան առիթները՝ որք ատեն մը միշտ կը չ'նտին մեր իրձերը մեր սրտին վրայ ազդած էին. եւ մենք երկուքս ալ կ'զգայինք թէ բան մը եղած ենք :

Կորով, քաջութիւն, կամք եւ զուարթու- թիւն իրենց բնական հանդերձութիւնը չ'թո- ղին իմ ջով ու ես ինքս սրտով ու հաճոյակա- տարութեամբ նուրջ սո ալ եւս անբաւական կը գտնէի ինքզինքս հետեւի այս վիճակին :

Կապուէի աստուան որպէսզի զինքը ան- նեմ. կ'սպասէի երեկոյեան որպէսզի նոյնը պա- տահէր. սակայն որպէսզի կը կենային եւ կար- ծես չարամիտ խաղով մը կ'ընդհատէին աստու- թրենց սասանի քրքրիները :

Իրերու եւ երեւոյթներու մէջ ամեն տեղ, ամեն անկիւն կը կարծէի թէ՛ զինքը կը տես- նեմ. եւ իր սուր ակնարկը որ միանգամով մին- չեւ իմ սիրտս կը քննէր. կը թուէր ինձ թէ կ'ուզէր հասկցնել. « Մ'ն, հետեւի'ր ինձի » :

Սակայն զու գիտես, Ալիս, երեւակայել զժուարթներ, լեզուին՝ որ չ'կրնար խօսել. զգո- ցումին որ չ'կրնար յայտնել եւ մտքին՝ որ ազո- տը կ'ըմբռնէ բայց իրականին երկիւղովը պա- շարուած կը թուանայ թէ մի գուցէ մտածում- ներովն ալ սխալի. այսպէս էր անս իմ իսկա- կան կացութիւնս. գոհացումի արամադիր սիր- տը հողին իրենց ընդունած, խօստացած ներքին տրոփումները դեռ եւս կարող չ'էին յայտնել եւ միամիտ երկիւղը հանրային կարծիքէն զողա- նար կը կամէր ծածուկը, անյայտը, որպէսզի չար լեզուն եւ չար նախանձը սիրոյ ճրագովը փա- փուեն սիրոյ ու խան ու խօստումը իր մտքովը չ'անցնէ. եւ այդպէս ալ եղաւ. չարին հար- տածը սպայակի մը լեզուն՝ խանդաբեց սիրոյ հրեշտակային խաղաղութիւնը մեր երկուքին համար :

Անկէ յետոյ սկսաւ լուս գառնութիւնը սի- րոյ մէջ. անողորմի սեւ դատաստանը մեր ներ- կայնէն անգին, մեր խօստմնալից ապագային համար :

Բայց երբէք չ'մոռցայ զինքը եւ երբէք մե- զաւոր չ'համարեցի զայն իրմէ պահանջուածին հետեւելուն համար :

Արդարեւ մեր երկուքին համար կեանք մը կազմելու մեր անտուր նախագիծը մեզի չ'նե- րեր. բայց սրտի անկեղծութեան եւ հոգիական սրբութեան իմացական իրաւունքը մեզ չի զլանար իր շնորհը . . . :

Մենք մեր յանցանքը մեր բողբոլը պիտի քաւէինք մինչդեռ քաւեցինք զեղեցիկ կեանքով մը, որ կանցնէր եւ մշտապէս սրտով մը, որ արդէն հասնելու վրայ էր . . . :

Ու խորհեցայ եւք մը. ճանապարհ մը ու- նեալ, ըսի ինձամ եւ մշտնջենական անկեղծի մը պէս ինկալ, որպէսզի իրեն անարժան գա- տատանով մը ելնէր ինքը իմ մտքէս եւ սր- բուռն մը սուրբ ներքործ ուժովը խաղաղութիւն ստար ինձի :

Չգամ ակնա ըկներուն եւ գողարկի փոխու- աին իմաստները մեկնեցի ուղածիս պէս, որ- պէսզի փշուրին անյայտանան բորբոքած սիրոյս լիառաս ապաւորութիւնները եւ զիս մշտնջե- նական գառնապարտուածի մը տանջանքէն իս- պատ ազատեն :

Իր արեգակնային երեւումովը՝ որուն թա- փանցիկ ճառագայթները մինչեւ իմ ներսս ողո- ղած՝ կը շնորհէր ինձ իր քաղցր ժպտալը եւ ես արբշտ այդ բոլորի եւ գրեթէ խնայաբար իր սիրոյն կը գոհանայի իրմով. հետեւեցայ անը- պատակ ուղղութեան մը, որպէսզի զէն այսպէսով զարմանեմ հոգեոյս վիշտն ու կորուստը :

Գեղեցիկ դարունը՝ ուր բնութեան անուշ հովերովը ու գեղեցուովը որպէս ծաղիկունք ան- մահի երազներով կ'երգէինք մեր խանդակաթ սենն ողջոյն. չարակամի նախանձին վրայ ծած- կեցի բոլորը եւ մենութիւնը ընտրեցի, որպէսզի միացորդ յոյսս սառանայ եւ նոր գարնան մը նոր կեանքին նոր առաջնորդողը լինիմ :

Վկայեցին լեզուովս եւ անհաստարթ իր գառնաորներուն մեղքի ճանապարհը հարթեցի . . . անողորմ հեղինակութեանց դասերէն գո- հացայ, որպէսզի միաքա հանդարտի եւ վերջա- պէս հաւատացած ըլլամ թէ՛ ոչ զոք ունիմ : Սակայն ո՛չ, ո՛չ, ամենն ալ ունայն մնա- ցին եւ բոլորն ալ անօրուս : Ու ես մնացի դարձ- եալ նոյնը ա՛ն միշտ նոյնը . . . :

Այն ատեն զգացի, Ալիս, թէ սէր մը ու-

նեցած եմ սրտիս մէջ, սէր մը կաթողին՝ որուն թարմ ու անուշարոյր կենդանութիւնը յաճախ երգել կուտայ ինձի այն տաղերը, որոց մէն մի շնչովը կարծարծուի սիրոյս վրայ ցանուած պա՛ղ պա՛ղ մոխիրը :

Ալ իրաւունք կուտամ քեզի, Ալիս, թէ սէրը չ'անգչիր. սէրը չ'յողնէր եւ ոչ ալ կը մեռ- նի :

Իսկ եթէ ես մեռնիմ . . . :

Ո՛հ, ո՛հ, անմահ է հողիս, Ալիս, հո՛ն, մեր չ'գիտցածին մէջ նա գիտէ վայելել զինքը իր փառքը. իր սէրն ու յիշատակը :

ԱՍՏՂԻԿ

ՊԱՏԱՄԱՆ ՍԸ

ԱՌ ԴԻՏՈՂ ՄԸ

Կը պատասխանեմ Արշալոյս ի 95 թուի մէջ հրատարակուած ձեր գրութեան այն մասին, որով կ'ակնարկէք Լսարան - Ըն- թերցատան Մայր Գիւանին :

Չեմ կարծեր որ յիշեալ մարմինը թե- րացած ըլլայ իր պաշտօնավարութեան մէջ, յորմէ հետէ ստորագրեալս կը պաշտօնա- վարէ իրապէս :

Չեմ կարծեր որ ընկերութեանս չա- հեյր վստանգուած ըլլան մի որ եւ է կերպով :

Ըստ իմ տեղեկութեանց՝ լիայոյս եմ որ յառաջիկայ Ընդհ. ժողովոյ մէջ պիտի լուսարանուին ամեն թիւրիմացութիւններ եւ Ընկերութիւնը պիտի շարունակէ իր գո- յութիւնը առանց մեծ եւ զգալի փոփոխու- թիւններ կրելու :

Ամենուն յայտնի բան մ'է որ ամեն ձեռնարկ առաւել կամ նուազ գծուարու- թեանց կը բաղխի ի սկզբան. բայց մի քիչ համբերութեամբ եւ բարի կամեցողութեամբ ամպերը կը ցրուին եւ օդը վերստին կը պայծառապիլայի. միայն թէ՛ իւրաքան- չիւր ոք իր սրտէն վտարէ ամեն անձնական նկատում. ե՛ ժողովոյն մէջ՝ ճիշտ յար- գէ կարգապահութիւնն եւ պալարիւնու- թիւնը :

Գէթ այս է իմ անձնական հաւատար- Լսարան - Ընթերցատան Մայր Գիւանի Բ. Ատենասպետ Գահիրէ 3-Օգոստ. 1900 Ա. ՊԱԼԵՍՏ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՏԻԻԸ.—Ն.Բ. Խտիվը միշտ Ձուրցե- րիա է, ուր լեռներուն մէջ շրջագայու- թիւններ կը կատարէ. Ն. Բարձրութիւն 23—24 ին Վիեննա պիտի գտնուի իւր եղ- բոր Իշխան Մուհամմէտ Ալիին հանդիպելու համար :

Ն.Բ. Իշխան Մուհամմէտ Ալի, Վիեննա գալէ առաջ պիտի այցելէ Աւստրիա, Հուն- դարիա, Պոսնիան եւ Հէրձէքովինը. Անտի Իշխանը պիտի ընկերանայ Ն. Բ. Խտիվին ի թրիէսթ, ուրկէ երկուքն ալ չորհեաւ պիտի նստին պոլիս երթալու համար, ուր ներկայ պիտի գտնուին Ն. Վ. Սուլթա- նին տարեդարձին առթիւ արուած հանդէս- ներուն :

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՉ.—Բողմաթիւ Իտա- լացիներ որոշեցին հանրային հանգանակու- թիւն մը բանալ Ումպէթթօ թագաւորին գերեզմանին վրայ արդրէ պսակ մը գնե- լու համար :

Գոմիթէին գանձապահն է հանրածա- նօթ վաճառական մը Պ. Բրիլի :

ԴԱՏԱՊԱՏՈՒՄԸ ՈՍՏԻՎԱՆ ՄՊԱՅ ՄԸ . —

Անցեալ օր Գահիրէի ոստիկանութեանէն սպայ մը , տարուան մը բանաարկութեան դատապարտուեցաւ : Այս պաշտօնեան Փաս- քալի վաճառատան մէջ գործուած գողու- թեան մը հեղինակները ձերբակալելով , գո- ղերուն քովէն բռնած է : մետաքսի կտոր- ներ : Սպան աւելի իւր կնոջ , քան իւր պար- տականութեանց կապուած ըլլալով , այդ գեղեցիկ կերպասէն չորս մէթրոյի չափ կա- ըելու փափուկ գազափարը ունեցած է նուե- ըելու համար զայն իւր կնոջ , և այնպէս ալ ըրած է . բայց սրովհետեւ ընդհանրապէս այդ կերպասէն եօթը մէթր կերպաս պէտք էր կնոջ մը չըլլալէստին համար , սիկինը այս նուէրին համար իւր երախտապարտ ըլլալը յայտնելէ վերջ , հետեւեալ օրը իրեն պակ- սած երկու երեք մէթրօն զնելու համար կերպասին նմայը ձեռքը Փասքալին վաճա- ռատունը երթալու անխոհմտութիւնը ունե- ցած է : Վաճառատան պաշտօնեաները իրենց ապրանքը ճանչնալով կնոջ ձերբակալել ստիպած և գողութիւնը երեան ելած է :

Պատժական ատեանը՝ ազատ արձակած էր այս հնաւաստիս սպան , բայց վերա- քննիչ ատեանը այս որոշման համակարծիք չեղաւ և բանտարկութեան դատապարտեց :

ԺԱՆՏԱԽՏ . — 1900 Յուլիս 31 ին վեր- ջացող շաբթուան մէջ ժանտախտի երեք դէպք պատահած է Աղէքսանդրիոյ մէջ . իսկ եզրագոտի մնացեալ մասերուն մէջ ոչինչ :

ՎԱԳՓ . — «Ժողովուրդի օճիկները» հրա- տարակած է Վաղֆներու Վարչութեան հա- սոյթներուն և ծախսերուն վիճակագրոյցը յորհէ կը քաղենք հետեւեալը :

Յունվար 1 էն մինչև յունիսի վերջը , հասոյթները 76, 561 եզրագոտի սակի ե- ղած են , մինչդեռ 1899 ին միւնոյն ամիս- ներուն մէջ 80, 678 սակի եղած էր :

Առաջին վեցամսէին ծախքերը 89, 605 սակի եղած են , մինչդեռ 1899 ին 87, 458 սակի էր : Գորոյցներու և բարեգործութիւն- ներու ծախքերէն զատ , միւս ծախքերը ա- մենքն ալ աւելցած են :

Տեղւոյն Հայի . Շահաս . Ընկ . Ընդհ . Ժողովոյ Պատ . Իրեանը կը յայտարարէ որ յառաջիկայ օգոստոս 5 , կիւրակէ առաւօտ ժամը 9 ին Շարա Ապտու Ալի-լ Գաֆի ԱՅՈՒԲԻ մէջ տեղի պիտի ունենայ տարե- կան Ընդհ . Ժողովոյ գումարումը , հաշ- ուեկազմի քննութեան և ներքին գումարու մասին խորհրդակցութեանց համար :

Այն ընկերները , որ չեն կարող ներ- կայ գտնուել , կրնան իրենց փոխանորդ մը կարգել , Ընդհ . Ժողովոյ գումարու- մէն առաջ գրաւոր դիմումով մը առ Գի- ւանն Ընդհ . Ժողովոյ :

Հետեւաբար նոյն օրուան նստէն բացա- կայ եղողները պարտին յարգել ներկայից որոշումները . նաև նոյն օրուան Ընդհ . Ժողովէն գաւառ ամեն գիտողութիւնը ան- լսելի են :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՐԱԿ 3 ՕԳՈՍՏՈՍ 1900

6088	7430	1728	9853	1308	2591
8071	1880	3471	3247	4835	4601
7205	804	8677	5433	7408	7326
2021	941	661	5787	6471	5491
		7628	7779	5138	

ՇՆՈՐՀԱՅԱԿՈՒՄ

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԱՆՆԻՅԱ ԳԱՓԱՄԱՃԱՆ .

ՏԻՍԻՔ ՍՏԵՓԱՆ ԵՒ ՄԱՆՈՒԷԼ ԳԱՓԱՄԱՃԱՆ . ՏԻՍԻՔ ԳՐՈՒԴՈՐ ԿԻՒՐՃԵԱՆ . ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅԻԼԵԱՆ . ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԽԱՉԻԿ ԹՈՒԼՈՒՄՊԱՃԱՆ . Իրենց շնոր- հակալիքը կը յայտնեն ամեն ազգականաց և բարեկամաց , որոնք փութացած էին ե- ըէկ ներկայ գտնուել յուզարկաւորութեան տխուր հանգիսին իրենց գտներ , քրօջ , կողակցին , քենիին , և ալգականին , ոչ- բացեալ :

ՏԻԿԻՆ ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԿԻՒՐՃԵԱՆԻ

որ յետ կարճատեւ հիւանդութեան կնքեց իւր մահկանացուն ի հասակի 25 ամաց :

Հ Ն Ո Ւ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս . Փէթէրպուրկ 1 Օգոստոս . — Գաշ- կարի Ռուսական հիւպատոսը կը հեռագրէ թէ՛ Ռուսերու զինուորական շարժմանց մա- սին չըլլած սուտ զրոյցներուն հետեւանօք կացութիւնը սակաւ առ տակաւ վրդովիչ կ'ըլլայ :

Թիէն-Չին 1 Օգոստոս . — Մահմէտա- կանները շատ զրգուած են Չինացիներուն դէմ , ուտելիքի նուազութիւնը Չինացիներ- ին Բէքինի և Թիէն-Չինի մէջ հաւաքումը կ'արգիլէ :

Բարիդ 1 Օգոստոս . — Գաշակից ուժե- րը Բէքինի վրայ կը քայլեն , գրեթէ ութը օրուան մէջ հոն կը հասնին :

Լոնտոն 1 Օգոստոս . — Լորտ Ռօպերթս կը հեռագրէ թէ՛ 1200 Պօէր նորէն անձ- նատուր եղեր են զօրավար Հընթրի : Փոճի- էթրը և ժիւպէն հրամանատարները զէն- քերին յանձնեցին զօրախաչ հա Տիլթընի , որ կը յուսայ թէ՛ 4, 000 բանտարկեալ ևս պի- տի միացնէ անոնց . Օլիվիէ 5 թիւղանոթով և բազմաթիւ Պիւրկրոններով դէպի Հէրիսմիթ փախաւ :

Բարիդ 1 Օգոստոս . — Մարդասպան Պը- ընտի հետ Իտալիա եկող քանի մը մար- դիկ ձերբակալուեցան : Կը կարծուի թէ մարդասպանութիւնը գաւի մը արգիւնքն է :

Լոնտոն 1 Օգոստոս . — Կալէսիի յա- նը թագուհւոյն կողմէ Գօպուրկ զրկուե- ցաւ ուրբաթ օր , տեղի ունենալիք Սաքս- Գոպուրկ Կօթա գրօին յուզարկաւորութեան ներկայ գտնուելու համար :

Լոնտոն 2 Օգոստոս . — Ծովակալ Սէյ- մուր Նան-Գին գնաց , փոխարքային այցե- լութիւն տալու :

Թիէն-Չինէն կրմացիներ թէ՛ ճաբոնա- կան յառաջապահը ետ մղուած է 150 հոգի կորսնցնելով . կ'ըսուի թէ՛ Ռուսները Թիէն Չինէն 10 մղոն հեռու գտնուող քանի մը բերդեր գրաւեցին , որոց 10, 000 հոգիի մօտ պահակագունդերը փախած են :

Անձրեւ սկսած է գալ առատօրէն և Ձի- նացիները կը պատրաստուին երկիրը ողը- ղելու :

— Թալլիի Բէքինի թղթակիցը Յուլիս 21 թուականու կը հեռագրէ թէ՛ պաշարեալնե- ին ուտեստ բերուած է . բոլոր գետպան- ները , գետապանատուններուն անդամները և իրենց ընտանիքները լաւ են և ուրախու- թեամբ կը սպասեն իրենց ազատման :

Լոնտոն 2 Օգոստոս . — Փուրիէսպուր- կի գրաւումը կատարուած է Չօրավար Կըն- տրի կողմէ , որ զինուորական փայլուն գործողութիւն մ'է . իր զօրքերը 40 մղոն չու մը կատարելէ յետոյ սուիտով և վաղ- քի քայլով գրաւեցին նեղ կիրճերը . լրտե- սոյ շնորհաբ քառամբակ արշաւելով քաղաք հասած է . և 200 անդլիացի գերիներ ա- զատելով զինած է ու ատոնց օգնութեամբ քաղաքը պահած են մինչև բանակին՝ գալը :

Բարիդ 2 Օգոստոս . — Պարսից Շահը կառքով ցուցահանդէսի պալատէն ելած պա- հուր , մէկը սպառնացած է լեյոնն ուէվօլվէ- լով մը . անմիջապէս ձերբակալուած է թէ- և՛ բայց կը մերժէ խօսիլ :

Բարիդ 2 Օգոստոս . — Գործաւոր մը Պարսից Շահին կառքին պատուանդանին վը- րայ ցատկած է Ռէվօլվէր մը ճօճելով . Վէ- ղիբը մէկգի ըրած է . զէնքը յարձակողը ան- միջապէս ձերբակալուած է :

Աքքրա 2 Օգոստոս . — Պէտտօզ հազա- րապետը վճռականապէս յաղթած և ի փա- խուստ գարձուցած է Ալանթիները . Տօմբօ Սասի մէջ , հաղաթապետը , երեք տեղա- կալներ և 25 հոգի վիրաւորուած են :

Հոռմ 2 Օգոստոս . — Հեպտէտէ աւե- լի բացորոյ կը տեսնուի թէ՛ Ուսպէթթօ թագաւորին սպաննութիւնը դաւադրութեան մը արգիւնքն է , բազմաթիւ անիլիսանական- ներ ձերբակալուած են :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ի Տ Ա Լ Ի Ս

ՊԱՊԻՆ ԵՄՄԱԿԸ . — Պապը տեղապա- կարտինալին նախկ մը ուղղեց որուն մէջ կ'ըսէ թէ՛ Չինաստանի մէջ քրիստոնեայ ար- եան թափուելուն և առաքելական տեղա- պահներուն անձուկ կացութեան վրայ իւր հոգին վշտով լեցուած է հետեւաբար կը հը- րաւիրէ ամբողջ կրօնականները՝ Աստուծոյ աղօթելու համար , որպէս ի խաղաղութիւն և կարծեաց համերաշխութիւն ներշնչէ շար- դերն ու աւերներն դաղփեցնելու համար :

ՄԵԼԵՆԻՔ ԵՒ ՍՈՒԼ ԻԱՆ . — Մեկնելիք թագաւորին սիրականը Չաքաշիա էֆ . էլ Գասապի՝ որ հիմա Աղէքսանդրիա կը գտնուի , Պոլիս պիտի երթայ եթովպիոյ Կայսեր նը- ուէրը Սուլթանին ներկայացնելու հա- մար :

Երկու Վեհապետներուն բարեկամու- թիւնը սմբացնելու ծառայող այս նուէրը՝ կը բաղկանայ ութը ամսուան աւելած մը և սե վազրէ մը որ գեղեցիկ տեսք մը ու- նին : Ասկէ զատ Նեկիւսին գետապանը հետը կը տանի իւր Վեհապետէն ինքնազիր նա- մակ մը ուղղեալ առ Սուլթանին :

Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Թ Ղ Թ Ա Բ Ե Ր

Բարիդ 23 Յուլիս 1900

Ուրախութեամբ կ'աւետենք թէ՛ Բա- ըրիի սակաւաթիւ նկարչութեան ուսա- նողներէն Կ . Պոլսեցի Պ , Արմենակ Յըն- տրղլընան որ գեղարուեստից վարժարանին յաջողակ աշակերտներէն մին է , ժամա- նակ է մը ի վեր երգեցողութեան գտներ ալ առնելով՝ կարողացեր է քանի մը շա- բաթներէ հետէ Բարիլի Ռընէստանս թատ- ընի երգեցիկ խմբին մէջ մտնել . Պ . Ա .

Ճընարգլեան շատ գեղեցիկ ձայն մը ունի, իւր Ռոնէտաւնս մտնելը - որ Բարիզի առաջնակարգ թատրոններէն մին և արգիստի մը համար հոն տեղ մտնելը շատ դժուար - պատիւ կը բերէ թէ՛ հայ նկարչին և թէ՛ հայ երգչին :

Մ.Ս. ԴԱԿԻՔ ԲԼԿ

Թէ ի՞նչօրէն եւ ԳՈՐԿՄԻՐՈՒԻ ԿՏԱԿ ՄԸ. - Գիւղացի մը զգալով իւր մտաւայ մահը, իր կինը քովը կանչելով կ'ըսէ անոր «Սիրելի կինս, ես պիտի մեռնիմ և մեռնելէս առաջ կ'ուզեմ կտակս ընել » . գիւղացին իւր բոլոր կամբքը գրեւ տալէ յետոյ հետեւեալը կը յաւելու . «գալով ձեռու ու շանս, ձին կը ծախես և ծնողացս կուտաս ստակը, իսկ շանս գինը քեզի թող ըլլայ » . Եւ խեղճ մարդը կը մեռնի :

Սուգի օրերը անցնելէ յետոյ, գեղացւոյն կինը փափաքելով իւր լուսահոգի ա՛մուսնոյն վերջին կամբքերը կատարել, առաջին ու շունը և աճուրդի գրաս. զանոնք : Չիոյն 25 ոսկի կուտային, սակայն շունը ոչ ոք կ'ուզէր ծախու առնել :

Առանց մէկուն միւսը չեմ ծախեր, բաւ գիւղացի կինը, եթէ կ'ուզէք երկուքը միասին ծախու առէք պայմանաւ որ շունին վճարէք 25 ոսկի և ձիոյն միայն 20 զուրուշ :

Թէպէտե գնողին խելքը չ'հասաւ այս առարկութեան՝ սակայն հաւանեցաւ :

Յաջորդ օրը հնազանդ կինը 20 զրուշ ձիուն գինը տարաւ իւր ամուսնոյն ծնողացը տուաւ և իրեն պահեց շանը գինը՝ 25 ոսկին :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Մերունի Տիար Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան երկրորդ ֆորման ալ հրատարակուած է :

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան գիւմել «Արշալոյս» ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ . ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7 :

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԱԶԱՐԵԱՆՑ - ԲԱՐԻՉ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշաներու աջակցութեամբ եւաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուել ուզողներն, կրնան գիւմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

Տիար Մ. Հայկունի Բարիկ ուղեւորելուն պատճառաւ, իւր հրատարակած «Վարագոյր Մարդկային Կենաց» գրքին սակաւթիւ օրինակներն յամուսնած է Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ . Գնել փափաքողք կրնան հոն գիւմել :

Բանի մը օրինակ մէկ անգամէն գնողին 20 առ հարիւր զեղլ կը լինի :

Տպարարին ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀՈՐԵՆԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՒԼ ԱԶԻԶԻ ՍԿԻԶԲԸ

Օտանկի դեղատանին դիւնացի փողոցին մեջ .

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8 :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին .

Այցեխարտեր, Երջարեւակներ, Գիտեր, Հրախրաքեր, Մահադրներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տուներ և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտահոլութիւն և չափաւոր գին :

ՎԱՍՏԱՐՈՒՄԵՆԵՐԸ ԿԱՆՈՒԻ ԵՆ :

ԿՈՊԵՌՈՒՄԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ .

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՑՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՑՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարելոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն ստացած է :

Պուտոյ մէջ Ապտուլահ Եղբարց տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէ. Բէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Եօզպէի Շարխա Գաւմէյ Օթէլ Շէֆէ-ԲՏՍԻ ճիշտ գիւմաց թիւ 3 արարթմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ զուրոր կուսկներ ի հարկին :

Ակրանիսիւն ընական մեծութեամբ, Կենդանագիրներ ամբողջական մեքենայով սրունք երբէք չ'են աւուրի :

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ ընական գոյներով ընկերաբիր :

Իւզանեղի եւ ջրանեղի պատկերներ և ընդ լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ոչքողք, ճեպէրքընաւ եւ ընդ :

Իրեն գիւմաց յաճախողներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ :

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՍԱԳՆՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամեն տէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատարեց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՏՕՐԹ. Ա. Յ. ԲԵՐԵՍՈՒԹԵԱՆ

Ի Շարխա Գոթ-Պէյ, թիւ 20

Իր ՁԻԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կ'են օրէ առաջ ժամը (ը. ե.) 9էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիւմել ուղղակի աղքատ հիւանդներու :

Գ Ա Ք Ե Ս Օ Ք Ա

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փաղար-Մրուրի խանութին մէջ պատրաստել Ենթեմի սուրճին ամենաբարձր և անխարդախ տեսակէն իրեն գիւմաց յաճախողներ օխան 16 զրուշ ոչլի հաշուով, զուտ Բաժնէ պիտի կրնան գնել. կշռոյ մէջ ալ ուղղափոխութիւն գտնելով :

Գ Ի Ք Ե Ո Ւ Զ Ո Ւ Ն Ե Ր Ո Ւ Ն

Գահիրէի և ջրակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իսախան, Գարոցիան, Գիսախան, Գրախան Արաբաստան, Բաւսախան, Վալախան եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պուլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ գիւմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալստեան վարժարան Հայոց ի Գահիրէ :

ՏՕՐԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԱՐՈՑԹ

Ապսիւն Շարա Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ սկուաներ :

Կը գաղբեցնէ վայրկեանայէս սկուայիցաւոր, ամերիկեան նորադոյն մեթոսով իւր պատրաստած գեղերով :

Կը բուժէ լինաերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած սկուաներուն սովորուածութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5 :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻԶՈՆ գլխաւոր գործակատար յԱղքատագրեալ :